Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԼԻԼԻԹ ՄԿՐՏՉՅԱՆԻ՝ ՀՈՒՆԳԱՐԻԱ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Լիլիթ Մկրտչյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող

3. Գործուղման վայրը և ժամկետները

Հունգարիա, նոյեմբերի 6-8, 2026 թվական

4. Հրավիրող կողմը

«Պետեր Պազմանի» կաթոլիկ համալսարան

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն «Պետեր Պազմանի» կաթոլիկ համալսարանի հումանիտար և հասարակական գիտությունների ֆակուլտետի հայագիտական ուսումնասիրությունների ամբիոնի հիմնադրման 10-ամյակին նվիրված միջոցառմանը

6. Քննարկված թեմաները

Ծրագրի շրջանակում քննարկվել են հետևյալ թեմաները՝

- Հայաստանի և Հունգարիայի միջև բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում համագործակցության զարգացման հեռանկարները:
- Կենտրոնական Եվրոպայում հայագիտական կրթության և հետազոտությունների զարգացման, հայագիտության միջազգայնացման և միջազգային ակադեմիական կապերի ամրապնդման հնարավորությունները:
- «Պետեր Պազմանի» կաթոլիկ համալսարանի հայագիտական ուսումնասիրությունների ամբիոնի գործունեությունը, ձեռքբերումները և

Հայաստանի բուհերի ու գիտահետազոտական հաստատությունների հետ համագործակցության ընդլայնման հեռանկարները:

- Ուսանողների, դասախոսների և հետազոտողների ակադեմիական շարժունության, համատեղ կրթական և գիտահետազոտական ծրագրերի իրականացման հնարավորությունները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

«Պետեր Պազմանի» կաթոլիկ համալսարանի հումանիտար և հասարակական գիտությունների ֆակուլտետի հայագիտական ուսումնասիրությունների ամբիոնի հիմնադրման 10-ամյակին նվիրված միջոցառման շրջանակում Լիլիթ Մկրտչյանը հանդես է եկել ելույթով՝ ներկայացնելով Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում իրականացվող բարեփոխումները, դրանց իրավական հիմքերը և միջազգային համագործակցության զարգացմանն ուղղված առաջնահերթությունները:

Ելույթի ընթացքում անդրադարձ է կատարվել 2025 թվականին ընդունված «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի հիմնական դրույթներին, բարձրագույն կրթության և գիտության ոլորտների ինտեգրմանը, ակադեմիական ազատության և ինքնավարության երաշխավորմանը, ինչպես նաև համակարգի արդիականացմանն ու շարժունության ապահովմանը: Ներկայացվել է նաև ՀՀ կառավարության կողմից իրականացվող «Ակադեմիական քաղաք» ծրագիրը՝ որպես որակյալ բարձրագույն կրթության և հետազոտության համար ժամանակակից կրթական միջավայրի ձևավորման կարևոր նախաձեռնություն:

Առանձին անդրադարձ է կատարվել Հայաստանի՝ Եվրոպական բարձրագույն կրթական և հետազոտական տարածքներին ինտեգրման գործընթացին, մասնավորապես՝ ԵՄ «Հորիզոն Եվրոպա» և «Էրազմուս+» ծրագրերին ՀՀ մասնակցությանը, դրանց շրջանակում իրականացվող համագործակցության հնարավորություններին և գիտական ու ակադեմիական շարժունության խթանմանը: Ներկայացվել է նաև Եվրոպական հետազոտական

տարածքին ինտեգրման կարևորությունը՝ ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2026-2030 թվականների ռազմավարական ծրագրի համատեքստում:

Ելույթի ընթացքում կարևորվել է Հայաստանի և Հունգարիայի միջև կրթության և գիտության ոլորտներում համագործակցության խորացումը: Այս համատեքստում ներկայացվել են 2025 թվականի մայիսի 27-ին ստորագրված համագործակցության մասին փոխըմբռնման հուշագրով նախատեսված «Ստիպենդիում Հունգարիկում» կրթաթոշակային ծրագրի հնարավորությունները: Անդրադարձ է կատարվել նաև «Պետեր Պազմանի» կաթոլիկ համալսարանի հայագիտական ուսումնասիրությունների ամբիոնի նշանակալի դերակատարությանը Կենտրոնական Եվրոպայում հայագիտական կրթության և հետազոտությունների զարգացման, միջազգային ակադեմիական կապերի ընդլայնման և հայագիտության միջազգայնացման գործում: Կարևորվել են Հայաստանի և Հունգարիայի կրթական ու գիտական հաստատությունների միջև համագործակցության հետագա ընդլայնման հեռանկարները:

8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթեր

Այցի շրջանակում որոշումներ, պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել: Փաստաթղթեր չեն ստորագրվել:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հյուրընկալող կողմը աջակցությունն էր ակնկալում Հայաստանի Հանրապետությունից հայագիտական կենտրոնի հետագա գործունեությունը անխափան շարունակելու կապակցությամբ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

X _____

Լիլիթ Մկրտչյան

10 նոյեմբերի, 2026թ.